ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում **05.11.2012թ.** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձի և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին:/**զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ** /:

2. Առաջին վերարտադրության աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման գործընթացի մասին:/**զեկ.Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու. ԱԶԱՏՅԱՆ**/:

3. Հայաստան համահայկական հիմնադրամի կողմից 2012 թվականի նոյեմբերի 22-ին Լոս Անջելոսում կազմակերպվող հեռուստամարաթոնին ակտիվ մասնակցություն ունենալու մասին:

4. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքապետարաններում հանձման-ընդունման աշխատանքների կազմակերպման ընթացքի մասին: **/ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ**/:

5. 2013 թ. հունվարի 1-ից <Եկամտային հարկի մասին> ՀՀ օրենքի կիրարկման և նվազագույն աշխատավարձի դրույքաչափի փոփոխության ազդեցությունը համայնքների բյուջեների վրա՝ **/Զեկ. մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏԶ վարչության պետ՝ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**/:

6. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից մարզի նախադպրոցական հիմնարկներում սննդամթերքի ձեռք բերման գործընթացում կատարված ուսումնասիրությունների մասին: **/Զեկ. մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏԶ վարչության պետ՝ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**/:

7. Մարզի առաջնահերթ խնդիրների լուծման 4-րդ ծրագրի իրականացում այն համայնքներում ուր սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը 2012 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կլինի 90 և ավել տոկոս: **/Զեկ. մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏԶ վարչության պետ՝ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:**

Այլ հարցեր և հայտարարություններ:

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

--- Մարզպետը շնորհավորեց նորընտիր ու վերընտրված համայնքապետերին՝նշելով,որ ի թիվս այլ աշխատանքների,իրենց առաջնային խնդիրը սեփական եկամուտների հավաքագրումն է:Դրանով է պայմանավորված պետական բյուջեով,միջազգային տարբեր կազմակերպությունների,հիմնադրամների ու ծրագրերի կողմից համայնքներում իրականացվող ներդրումային բազմաթիվ նախագծերի իրականացումը:

Նա համայնքների ղեկավարներին հորդորեց մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ դիզվառելիքի, պարարտանյութի ձեռքբերման, աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման ծրագրերին:Նշվեց,որ 2011 թվականին մարզին հատկացվել է աշնանացան ցորենի սերմացու և,անկախ արձանագրված բնակլիմայական պայմաններից,սերմացուի վերադարձը՝սահմանված արժեքով և չափով,պետք է անպայման իրականացվի մինչև դեկտեմբերի 1-ը:Դրանով է պայմանավորված երկրում սերմաթարմացման ծրագրի շրջանակներում գալիք տարում նոր սերմացուների տրամադրումը:

Քննարկվեցին նաև մարզի համայնքապետարաններում հանձնման-ընդունման աշխատանքների կազմակերպման ընթացքի,հունվարի 1-ից <<Եկամտային հարկի մասին>> ՀՀ օրենքի կիրարկման և նվազագույն աշխատավարձի դրույքաչափի փոփոխության՝ համայնքների բյուջեների վրա

և նվազագույն աշխատավարձի դրույքաչափի փոփոխության՝ համայնքների բյուջեների վրա ազդեցության,ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից մարզի նախադպրոցական հիմնարկներում սննդամթերքի ձեռք բերման գործընթացում կատարված ուսունասիրությունների մասին և այլ հարցեր:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

1.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Յու.Ազատյանին

--- Հավաքագրել դիզելային վառելիքի և ազոտական պարարտանյութի պահանջվող քանակի գումարները:

/ժամկետ մինչև դեկտեմբերի 1 /

--- Ներկայացնել տեղեկատվություն մարզին տրամադրված աշնանացան ցորենի սերմացուի գումարների վերադարձման ընթացքի մասին:

/ժամկետ մինչև դեկտեմբերի 1 /

2.Ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Ն. Գալստյանին

---Լուրջ ուշադրություն դարձնել մարզի համայնքներում հողի հարկի,գույքահարկի և սոց.վճարների հավաքագրման գործընթացին:

/ժամկետ մինչև դեկտեմբերի 1 /

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս.Սահակյան

--- Ակտիվորեն մասնակցել <<Հայաստան>> համահայկական հիմնադրամի կողմից ս.թ. նոյեմբերի 22-ին Լոս-Անջելեսում անցկացվելիք հերթական <<Հեռուստամարաթոն-2012>>- ին:
/ժամկետ մինչև նոյեմբերի 21 /

2.Մարզպետի տեղակալ Ա.Արսենյան

--- Մարզի համայնքների զորահավաքային պլանների ստացման գործընթացի վերաբերյալ:
/ժամկետ մինչև դեկտեմբերի 1 /

3.ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Հովսեփյան

--- Մարզի համայնքներում տեղեկատվական կենտրոնների կազմմավորման վերաբերյալ:

--- ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 13-ի N 1202-Ա որոշման հավելված N 1-ի 4.4-րդ կետի և ՀՀ վարչապետի մոտ 2012 թվականի հոկտեմբերի 5-ին կայացած խորհրդակցության արձանագրության 6-րդ կետի 2-րդ ենթակետի հանձնարարականի՝ ՀՀ Արագածոտնի մարզում անձնավորված հաշվարկը (գրանցման հայտը) էլեկտրոնային եղանակով ներկայացնելու գործընթացի վերաբերյալ:

4.Ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Ն. Գալստյան

--- Գնումները կազմակերպել բացառապես ՀՀ գնումների մասին օրենքների դրույթներին համապատասխան:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ